ՖԵԼԻՔՍ ՄՈՎՍԻՍՅԱՆ

1848 Թ. ՎԵՆԵՏԻԿԻ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՅՔԱՐԸ ԳԱԲՐԻԵԼ ԱՅՎԱԶՈՎՍԿՈՒ ԳՆԱՀԱՏՄԱՄԲ

Իտալական պետություններում 1840-ական թթ. ծավալված հայրենասիրական և լիբերալ շարժումը 1848 թ. հանգեցրեց ազգային-ազատագրական պայքարի՝ հանուն ավստրիական տիրապետության թոթափման և իտալական ինքնուրույն ազգային պետության ձևավորման: Մասամբ դա պայմանավորված էր Հռոմի Պիոս IX պապի վարած լիբերալ քաղաքականությամբ ու բարեփոխումներով, որոնք խոր տպավորություն թողեցին ոչ միայն Իտալիայում, այլև՝ համայն եվրոպայում: Գերագնահատելով դրանք՝ Ավստրիայի կանցլեր Մետտեռնիխը Պիոս IX-ի ձեռնարկումները համարեց նոր դարաշրջանի սկիզբը[1]: Հռոմի պապի՝ բարեռորոգչի և Իտալիայի ազատարարի դերին հավատում էին ոչ միայն հասարակության լայն խավերը, այլև նույնիսկ ժողովրդական շարժման գործիչները: Անգամ Ջ. Մացցինին և Ջ. Գարիբալդին Պիոս IX պապին կոչ արեցին գլխավորել իտալական ազատագրական շարժումն ու իրականացնել Իտալիայի միավորումը[2]: Տուրք տալով ժամանակի եվրոպական հասարակական տրամադրություններին՝ Հռոմի պապին ազատասեր, բարեռորոգիչ ու Իտալիայի ազատարար էին անվանում նաև հայ ազգային-պահպանողական ուղղությունը ներկայացնող Մխիթարյան միաբանության «Բազմավեպ» և «Եվրոպա» պարբերականները, միաբանության անդամներ Ղևոնդ վրդ. Հովնանյանը[3], Պողոս վրդ. Հովնանյանը[4], Գրիգոր վրդ. Գովրիկյանը[5], Կ. Պոլսի հայոց պատրիարք Մաղաքիա արք. Օրմանյանը[6], ինչպես նաև Կ. Պոլսի հայոց պատրիարքարանի պաշտոնաթերթ «Հայաստանի» խմբագիր Հովհաննես

---

[1] См: История XIX века. Под. ред. Лависса и Рамбо. М., 1938, том 5, стр. 43.

[2] См: М. И. Ковальская. Италия в борьбе за национальную независимость и единства. М., 1981, стр. 246; А. Лурье. Гарибальди. М., 1957, стр. 72.

[3] Տես Հ. Ղևոնդ վ. Հովնանեան, Պատմութիւն քաղաքակրթութեան եվրոպական տերութեանց ընդհանրապես, հ. Դ, Վիէննա, 1860, էջ 235:

[4] Տես Հ. Պողոս վ. Հովնանեան, Պատմութիւն Իտալիայի ի սկզբանէ մինչև մեր օրերը, Վիէննա, 1864, էջ 264-265:

[5] Տես Հ. Գրիգոր վ. Գովրիկեան, Ընդհանուր պատմութիւն համառօտ, Վիէննա, 1879. էջ 275:

[6] Տես Մ. արք. Օրմանեան, «Ազգապատում», Մայր Աթոռ Սբ. Էջմիածին, 2001, հ. Գ, էջ 4400:

Զամուռճյան-Տերոյենցը[7], «Արշալույս արարատյանի» խմբագիր Ղուկաս Պալդազարյանը[8], «Բանասերի» խմբագիր Հովհաննես Հիսարյանը[9] և ուրիշներ:

«Բազմավեպի» խմբագիր Գաբրիել Վրդ. Այվազովսկու գնահատմամբ՝ Հռոմի պապը բարեփոխումների շնորհիվ «ոչ միայն իր հպատակաց, այլ օտարաց զարմանալի կերպով մը սիրելի ու մեծարելի եղավ... մեծ ազդեցություն ունեցավ իր անունն ու բռնած ճամբան բոլոր Իտալիո բնակչացը վրա, այնպես որ Կեցցէ Պիոս Իններորդ ձայնը կարծես թէ մեռելոց հարություն տուող փողի մը ձայն եղավ իրենց մէջ»[10]:

1848 թ. իտալական ազգային-ազատագրական պայքարը գլխավորեց ոչ թե Հռոմի պապը, այլ Սարդինիայի թագավոր Կարլ Ալբերտը, որի շուրջը համախմբվեցին իտալական պետությունների հայրենասիրական ուժերը:

Վենետիկի Մխիթարյանները երկար ժամանակ ականատես էին իտալական պետություններում Հաբսբուրգների իրականացրած բռնություններին և օտարի տիրապետության դեմ ծավալված հայրենասիրական շարժմանը: Նրանք անտարբեր չէին Իտալիայի պատմական ճակատագրի հանդեպ, անկեղծորեն ցանկանում էին նրա ազատությունն ու անկախությունը, իսկ Ֆրանսիական տիրապետությունը գերադասում էին ավստրիական գերիշխանությունից: Ղուկաս վրդ. Ինճիճյանն «Ազգասեր» աշխատությունում չէր խորշում գովաբանել իտալացիների ազգասիրությունն ու հայրենասիրությունը, ընդգծել նրանց ազատասիրության ուղեգծի ճշմարտացիությունը: Նա իտալացի հայրենասերներին ոչ միայն ոտքի ելնելու կոչ էր անում, այլև նրանց հայրենասիրությունն ու ազգասիրությունը հայության համար ուղենիշ համարում[11]:

Վենետիկի Մխիթարյաններն իրազեկ էին, որ իտալական հայրենասիրական չափավոր լիբերալ ուղղության անվանի գաղափարախոսներից ու գործիչներից Վ. Զոբերտին, Ա. Գավացցին և ուրիշները հոգևորականներ են, իսկ Իտալիայի ազատագրության ու միավորման խնդրի լուծումը հանրության լայն խավերը կապում են Հռոմի պապի հետ: Նրանք ականատես էին, թե ինչպես Հաբսբուրգների արքայատոհմի ներկայացուցիչ իտալական գահերեցները 1848թ. համաժողովրդական շարժման ազդեցության տակ լիբերալ կառավարություններ են կազմում, սահմանադրություն հռչակում կամ էլ ուղղակի փախչում իրենց տիրույթներից: Այս պայմաններում Մխիթարյանները չէին կա-

---

[7] Տե՛ս «Հայաստան», 1848, 14 փետրվարի:
[8] Տե՛ս «Արշալույս արարատյան», 1848, 23 հունվարի, թիվ 303:
[9] Տե՛ս «Բանասեր», 1851, հունվար, թիվ 1, էջ 47:
[10] «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 134:
[11] Տե՛ս Հ. Ղուկաս վ. Ինճիճեան, Ազգասէր, Վենետիկ, 1815, էջ 20, 29-30, 76-78:

ռող զերծ մնալ նոր հովերի ու գաղափարների ազդեցությունից: Երկար տարիներ Հաբսբուրգների բռնությունների տակ հեծող Վենետիկը 1848 թ. մարտին նույնպես ըմբոստացավ՝ դրսևորելով ազատաբաղձ տրամադրություններ: Այդ իրադարձությունների անմիջական տպավորության տակ ազատատենչ տրամադրություններին տուրք տվեց նաև Գաբրիել վրդ. Այվազովսկու «դյուրաթեք գրիչը»[12]: Գ. Այվազովսկին իրատեսորեն[13] է վերլուծում իտալական պետություններում առկա քաղաքական վիճակը 1848 թ. ազատագրական պայքարի նախօրյակին: Նրա համոզմամբ՝ ավստրիական կառավարությունը «հարկավ կը տագնապեր» իր կազմում գտնվող իտալական տարածքներում տիրող տրամադրություններից, «գիտեր որ իրեն հպատակ իտալացիները մեծամեծ դժգոհություններ ունեին իրեն դեմ», ժամանակ առ ժամանակ ըմբոստանում էին և «առիթ մը գտածներուն պես բոլորովին իրմէ գլուխ քաշելու պատրաստ էին. ասանկ էին Լոմպարտիա և Վենետիկ նահանգներուն բնակիչները»[14]: Նա քաջատեղյակ էր, որ այսպիսի տրամադրություններ էին տիրում նաև իտալական մանր պետություններում, որոնք «կամաց կամաց իրարու հետ միանալով՝ գեթ դաշնակցութեամբ մէկ ազգ ու մէկ ինքնագլուխ ազատ երկիր մը ձևանալ կը ջանային»[15]:

Ճիշտ ներկայացնելով իտալական հայրենասիրական շարժման նպատակը[16] Գ. Այվազովսկին պատմում է, որ իտալական հայրենասիրական շարժումից անհանգստացած Մետտեռնիխը դիմեց Անգլիայի և Ֆրանսիայի կառավարություններին՝ հայտնելով այդ կապակցությամբ իր մտահոգությունը: Այս պետությունները «խոհեմ պատասխան» տվեցին՝ հայտարարելով, «թե ոչ իրենք և ոչ Ավստրիան պետք է խառնուին Իտալիո ազատ տէրութեանց ներքին գործողություններուն, մանավանդ թե պետք է հավնին ու օգնեն ալ անոնց գովելի ջանքին՝ խորհրդով ու բարի օրինակով»[17]: Գ. Այվազովսկու դիտարկմամբ՝ այս պատասխանը Մետտեռնիխի «ուզածին պես չէր»: Նա արտաքուստ ցույց տալով, որ չի խառնվում իտալական պետությունների ներքին գործերին, իրականում սկսեց սահմաններում զորք կուտակել, Լոմբարդո-Վենետիկյան նահանգում իր զորքի քանակը հինգ անգամ ավելացրեց, գրավեց Պապական պետության մաս կազմող Ֆերրարա քաղաքը, ձերբակալել տվեց Դ. Մանինին և

---

[12] Տե՛ս Ա. Հովհաննիսյան, Նալբանդյանը և նրա ժամանակը, հ. 1, Ե., 1955, էջ 252:
[13] См: История Италии. Под. ред. К. Ф. Мизиано. М., 1970, том 2, стр. 139-141, 151-163; История Италии XIX века, том 5, стр. 42-26.
[14] «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 134:
[15] Նույն տեղում:
[16] См: История Италии, том 2, стр. 158-163; История XIX века, том 5, стр. 46-28.
[17] «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 134:

Ն. Թոմազեոյին. «զանազան սպառնական հրովարտակներ հանեց դժգոհ Իտալիո դեմ» և նույնիսկ «պատերազմական օրենք ալ հրատարակեց»[18]: Ավստրիական իշխանությունների վարած այս քաղաքականությունից իտալացիների «դառնությունն ու կատաղությունը այնչափ էր», ուստի «տերության դեմ թշնամությունը» ընդգրկեց բնակչության բոլոր խավերին, իսկ փետրվարյան հեղափոխությունը Ֆրանսիայում և հանրապետության հռչակվելը «բորբոքեց այն ազատության սիրոյն կրակը, որ ամեն տեղ արդեն կմխար ու այսպիսի փոթորիկի մը փչելուն կսպասեր»[19]: Գ. Այվազովսկին իտալական ազատագրական պայքարի հերոսական բազմաթիվ դրվագներից անդրադառնում է միայն Վենետիկի ապստամբությանն ու հանրապետության հռչակմանը: Նա «Վենետիկ քաղաքին նոր ազատությունը» վերնագրով հոդվածում Վենետիկի դեպքերը մի մասը շարադրում է որպես դրանց անմիջական ականատես, իսկ մնացածը՝ այլ «ականատես և հավատարիմ մարդկանց վկայությամբ ստուգած ըլլալով»: Այս հոդվածը լույս տեսավ 1848 թ. մայիսի 1-ին, երբ Վիեննան բռնկված էր հեղափոխական պայքարով. Մետտեռնիխը փախել էր երկրից, գրաքննությունը վերացել էր և ավստրիական կայսրությունում սահմանադրություն հռչակվել: Այս հանգամանքը անշուշտ, իր դերը խաղաց, որպեսզի Գ. Այվազովսկին անկաշկանդ շարադրի վենետիկցիների պայքարը: Նա գրում է, որ բառերով հնարավոր չէ «պատմել Իտալիո ժողովրդոց ցնծությունը. Մեթթեռնիքին իյնալը կարծես թե իրենց ազատության ավետիսն էր»[20]:

Վիեննայում տեղի ունեցած իրադարձություններին քաջատեղյակ Գ. Այվազովսկին ճիշտ է[21] նկատում, որ հեղափոխությունից ահաբեկված ավստրիական իշխանավորները «ինչ ընելիքնին չէին գիտեր»: Սահմանադրություն հռչակելու կայսրի խոստումն Ավստրիայի հպատակների վրա «մեծ ազդեցություն մը չըրին», ուստի նրանք «ուրիշ շատ ավելի ազատություններու կսպասեին...»[22]: Այսպիսի ակնկալիքներով Վենետիկի ժողովուրդն «իր սովորական խաղաղասեր ու բարեսիրտ բնութեամբը» մարտի 17-ին հավաքվեց սուրբ Մարկոսի հրապարակում՝ վանկարկելով՝ «Կեցցէ սահմանադրությունը, Կեցցէ կայսրը»: Այնուհետև ժողովուրդը բանտից ազատեց «երկու կտրիճներին»՝ Մանինին ու Թոմազեոյին և ուսերի վրա դրած «հաղթանակավ» բերեց հրապարակ, որտեղ հավաքված անթիվ բազմությունը հանդիսություն կազմակերպեց:

---

[18] Նույն տեղում, էջ 134-135:
[19] Նույն տեղում, էջ 135:
[20] Նույն տեղում, էջ 136.
[21] Սմ. Е. Пристер. Краткая история Австрии. М., 1952, стр. 356-367.
[22] «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 136:

Գ. Այվազովսկու պատմելով՝ միայն տեսնել էր պետք այդ օրվա «ժողովրդեան ցնծությունը», որը, պարզելով Իտալիայի ազգային եռագույն դրոշները, անդադար բացականչում էր՝ «Կեցցէ՛ Իտալիա, Կեցցէ՛ Պիոս Իններորդ, Կեցցէ՛ Վենետիկ» և այլն:

«Ափսոս որ այն օրվան ուրախությունը,- շարունակում է նա,- բոլորովին առանց տրտմության չվերջացավ», քանզի ավստրիական իշխանությունները ժողովրդի դեմ զորք դուրս բերեցին: Շատերը վիրավորվեցին, իսկ մի քանիսը սպանվեցին, «սարսափն ու տրտմությունը տիրեց քաղաքին»[23]: Հաջորդ օրը մի խումբ քաջասիրտ վենետիկցիներ Դ. Մանինի գլխավորությամբ գնացին քաղաքապետարան ու իշխանություններից պահանջեցին «քաղաքը հանդարտության մեջ պահել և նոր խռովություն» թույլ չտալու նպատակով ազգային պահապան զորք կազմել: Նահանգապետ Պալֆին, խորհրդակցելով Վենետիկի զինվորական պարետ Զիչիի հետ, այդպիսի հրաման տվեց: Կարճ ժամանակում սուրբ Մարկոսի հրապարակը լցվեց զինված կամավորներով, իսկ քաղաքում հանդարտություն հաստատվեց: Երեկոյան Պալֆին քաղաքապետարանի շենքում ընթերցեց կայսրի հրովարտակը սահմանադրություն շնորհելու մասին, որը վենետիկցիները ցնծությամբ ընդունեցին: Սակայն մարտի 21-ին Վենետիկում «անհանգստություն տիրեց», հայտնի դարձավ, որ ավստրիացի զինվորականները զորանոցներում կռվի են նախապատրաստվում: Այդ նպատակով նրանք նավարանում զինամթերք էին կուտակում, իսկ զինանոցի պետ գնդապետ Մարինովիչը մտադիր էր քաղաքը հրդեհել: Քաղաքային պահապան զինվորները հասկանալով, որ քաղաքը վտանգի մեջ է՝ երդվեցին արհամարհել մահն ու գնալ տիրել նավարանին և զինանոցին: Վենետիկցիների «մեծ մասը սաստիկ ատելություն ունեին» Մարինովիչի նկատմամբ «իր չափե դուրս խստության ու անգթության համար», ուստի «կատաղաբար» հարձակվեցին նավարանի վրա: Գ. Այվազովսկին մանրամասն և ընդհանուր առմամբ հավաստի[24] պատմում է վենետիկցիների կողմից նավարանը գրավելու, Մարինովիչի սպանության, ավստրիացի գնդապետ Պոտային վիրավորելու, իսկ գնդապետ Վիմփֆենին՝ իտալական եռագույն դրոշին «հնազանդեցնելու» մասին: Գ. Այվազովսկին կատարվածի համար վենետիկցիներին չի հանդիմանում, այլ նշում է, որ նրանցից շատերը «փառք կուտային Աստծո, որ այնպիսի մեծ վտանգե ազատեցան»[25]: Նա վենետիկցի ապստամբներին խռովարար չի անվանում, այլ՝ «հասարակ ժողովուրդ», իսկ նրանց առաջնորդող մարդկանց՝

---

[23] Նույն տեղում, էջ 137:
[24] См. История Италии, том 2, стр. 172-173; История XIX века, том 5, стр. 52.
[25] «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 139:

«կտրիճ քաղաքացիք»: Նա, թեպետ, տեղյակ չէր, որ Մանինը նախապատրաստել ու գլխավորում էր ապստամբությունը, այնուամենայնիվ ընդգծում է նրա ղեկավար դերը: Գ. Այվազովսկին իրազեկորեն պատմում է, որ Վենետիկի մունիցիպալիտետի անդամները կոմս Քորրերի գլխավորությամբ մարտի 22-ին Պալֆիից պահանջեցին ավստրիական զորքն անհապաղ դուրս բերել Վենետիկից՝ սպառնալով հակառակ դեպքում արյուն հեղել: Պալֆին տեղի տալով ճնշմանը՝ հրաժարվեց իշխանությունից և քաղաքը հանձնեց Զիչիին: Վերջինս մի փոքր դիմադրությունից հետո անձնատվության ակտ ստորագրեց ու քաղաքային իշխանությունը հանձնեց մունիցիպալիտետին: Գ. Այվազովսկին ամբողջությամբ ներկայացնում է անձնատվության պայմանները և պատմում, որ նրա ստորագրվելուց հետո Մանինը ներկայացավ սուրբ Մարկոսի հրապարակ: Այստեղ նա «կարճ, բայց տաք ու զորավոր» ճառ արտասանեց և ժողովրդին տեղեկացրեց, որ «փառավոր ու հոյակապ քաղաքը» իրենց ձեռքում է: Նա բազմությանը կոչ արեց բացականչել՝ «Կեցցէ հասարակապետությունը» (հանրապետությունը-Ֆ.Մ.), որը միաբերան այն կրկնեց «մեծ ցնծությամբ»: Հետևելով Մանինի օրինակին՝ ժողովուրդն «անպատմելի ուրախությամբ» վանկարկում էր նաև «Կեցցե Իտալիան»: Ըստ Գ. Այվազովսկու՝ բառերով հնարավոր չէ «պատմել այն բյուրավոր ժողովրդեան ուրախությունը, որ կարծես թե ինքզինքը կորսընցուցեր էր...»: Նրան զարմանք էր պատճառում հատկապես այն իրողությունը, որ ժողովրդի մեծ մասը մեկեն «հեղեղի պես վազեց լեցուեցավ սրբոյն Մարկոսի եկեղեցին ու Աստուածածնայ հրաշագործ պատկերին դիմացն ընկած՝ չէին գիտեր թէ ինչպես հայտնեն իրենց շնորհակալությունը, որ այնպիսի սոսկալի վտանգէ ազատեց քաղաքը և անանկ անկարծելի հաջողությամբ դարձուց իրենց նախնեաց սիրելի ու փառավոր հասարակապետության հիշատակը՝ հիսուն տարիեն ետև»[26]: Ընդհանուր գծերով ճշմարիտ[27] ներկայացնելով Վենետիկի հանրապետության հոչակումը և այդ գործում Մանինի դերը՝ Գ. Այվազովսկին այնուհետև չի խորշում փաստել, որ «նոր հասարակապետությունը սկսավ զարմանալի գործունեությամբ ու խոհեմությամբ ներքին և արտաքին բարեկարգութեանց ուշ դնել»:

Առհասարակ Գ. Այվազովսկու պատմածից ակնհայտ նկատելի է նրա համակրանքը Վենետիկի պայքարի նկատմամբ: Նա կատարվածը չի համարում հեղափոխություն կամ էլ խռովություն, այլ՝ Վենետիկի ազատագրումը ավստրիա-

---

[26] Նույն տեղում, էջ 140:
[27] См: История Италии, том 2, стр. 173.

կան տիրապետությունից: Այդ իրողությունը նա ընդգծում է ոչ միայն հոդվածի վերնագրում, այլև շեշտում է, որ Վենետիկի գավառի մյուս «քաղաքներն ալ ազատեցան Ավստրիո ձեռքեն և իրենց հավանությունը տվին Վենետիկո հասարակապետության առժամանակեա կառավարությանը»:

Նա հավատում էր, որ ավստրիական զորքերի հրամանատար Ռադեցկին Լոմբարդո-Վենետիկյան նահանգում կրած պարտությունից հետո «շատ չդիմանար Իտալացվոց բորբոքեալ համաշխարհական եռանդեանը դեմ, ու Իտալիո թերակղզին բոլորովին ինքն իշխան կըլլա»[28]:

Գ. Այվազովսկու կանխատեսումը չկատարվեց. իտալական ազատագրական պայքարը 1849 թ. պարտություն կրեց և Իտալիան չկարողացավ թոթափել ավստրիական տիրապետության լուծը: Այդ պայքարի հերոսական էջերից մեկը դարձավ Վենետիկի պաշտպանությունը, որի բնակչությունը շուրջ մեկ տարի շրջափակման պայմաններում համառ դիմադրություն ցույց տվեց ավստրիական գերակշիռ ուժերին: Այս իրադարձություններին Գ. Այվազովսկին չանդրադարձավ: Նա ընդգծում է, որ որպես կատարված փոփոխությունների «անխռով սրտիվ հանդիսատես» վստահեցնում է իր ազգակից եղբայրներին, «թե իբրև օտար ու բարեկամ տերության հավատարիմ հպատակք» պարտավորվում է «ասկեց ետքն ալ պատկառելի ու սիրելի մնալ աս հյուրընկալ երկիրներուն հեղափոխութեանցը մեջ»[29]:

Նա հավատարիմ մնաց այս պարտավորությանը, իսկ 1849 թ. լքեց «Բազմավեպի» խմբագրությունը:

---

[28] «Բազմավեպ», 1848, 1 մայիսի, թիվ 9, էջ 140:
[29] Նույն տեղում, էջ 141: